



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

(Ա. ՏԱՐԻ)

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 16)

ԲՈՎ Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կացութիւննիս. Երուանդ Սրմաքէշխանլեան. — Գիտական արձագանգ
(Եկեղեցիի Դէպքերէն Կեդ), Յ. Ս. Փափազեան. — Կեդաւոր մը, Ե. Ս. — Դադ-
րականները (Էնդ), Ե. Սրմաքէշխանլեան. — Կիսամահակ :

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ , ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՉՉ Շ Ա Ի Ի Ղ ՉՉ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արատասհմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 առլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեդին, նամակ, յօդուած, լրագիր եւ գիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

ՇԱԽԻՂ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԻՍՏԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

Թիւ 16

ԿԱՑՈՒԹԻՒՆՆԻՍ

Սուլթան Համիտ ոչ միայն ահաւելի մարդասպան մըն է, այլ և նենգամիտ վրէժխնդիր մը : Չէ մուրաբադ որ հայերը՝ իր յորեւեանի համաշխարհային ցնծութեան ու գեանաբարը ալէլուեաներու քաղցրալուր համանուագին մէջ ախուր և սառն խառնաձայնութիւն մը բերին իրենց Սպաղանքի կոտորածին անպատեհ աղմուկովը : Խեղճ մարդը ինչ որ ընէ՝ սատանայ հայերը զիմացը կը տեսնայ !!! : Եւ մտածել որ քսան և հինգամեայ անդուլ անդադար աշխատանքէ մը ետքը, Համիտ աւրարը դեռ Հայաստան և հայութիւն բառերէն հալածուելու չափազանց անհաճոյ դրութեան մէջ կը գտնուի : Գուցէ իր գծած ու հետեւած ծրարագրին համեմատ, հայ անունը այլ ևս դադրած պիտի ըլլար յորջորջուելէ քաղաքակիրթ աշխարհին մէջ : Գուցէ իր տնտեսանալի յորեւեանին հանդիսաւորման բուրգին ա-

նիկա կը յուսար իր այդ գերագոյն ու իսէալ նպատակակէտը յաջողութեամբ պսակուած տեսնել : Ու ոչ միայն տարիներով փայփայած յորջորջուելու իր, այլ և ամենէն հանդիսաւոր վայրկենին քաղաքակիրթ աշխարհը դարձեալ առիթ կուտենայ հրէշին ճակտին փակցնելու « մարդասպան » բառը հրաշէկ երկաթի մը կակծեցնող խարանուսովը : Եւ որո՞ն պատճառաւը. հայերուն, յաւիտենական, անխուսափելի հանրուն :

Սուլթան Համիտ ձայն չի հաներ, բայց միտքը կը պահէ, և տհա երկու ամիս ետքը իր վրէժը կը բռնէ հայերէն՝ պատուհասելով զանոնք :

Հոկտեմբեր 16 ին, Թայնսըի Պոլսոյ թղթակիցը հետեւեալ արիւնալի հեռագիրը կը հաղորդէ իր թերթին .

Հայոց պատրիարքը նոր տեղեկագիր մը ստացած է Մուշի առաջնորդէն, որ քստմեցուցիչ տեղեկութիւններ կուտայ Մուշի եւ Վանի հայերուն թշուառութեանը վրայ, որուն մատնուած են քիւրտերու հարստահա-

րութեան երեսէն. գիւղերու բնակիչները ամէն բանէ մերկացած են. իրենց ոչխարները, արջառները, հունձքերը եւ առտնին գոյքերը ամբողջովին տարուած են քիւրտերէն. շատեր մեռած են անօթութենէ: Տեղեկագիրը սապէս կը վերջանայ. «կոյս մնացած աղջիկ բնա՛ւ չիկայ. չիկայ կին մը որ բռնաբարութենէ ազատուած ըլլայ: Այս դաւառներուն մէջ գտնուած բոլոր հայերը այն աստիճան յուսահատած են որ այլ եւս միմիայն կը բաղձան որ ընդհանուր կոտորած մը տեղի ունենայ, եւ այսպէս վերջանան իրենց անտանելի տառապանքները:

Աւելորդ է մատնանիչ ընել այս հեռագրին ծանրակշիռ կարեւորութիւնը. տխուր պերճախօսութիւն մը ունի անիկա. 95-96 ի մեծազանգուած կոտորածներէն ի վեր Հայաստանի վիճակին վրայ այս աստիճան սարսափեցնող լուր հաղորդած չէր եւրոպական մամուլը: Եւ ընդունելով որ այս աղմկալից հեռագրին պարունակութիւնը ոչ միայն չափազանցութիւն չէ, հապաշատ համառօտ մէկ պատկերը իրերու ճշգրիտ կացութեան, կը մղուինք մտածելու թէ վանի եւ Մուշի գաւառները մեծագոյն մասամբ աւարի տրուած ու քանդուած ըլլալու են: Վան եւ Մուշ Հայաստանի երկու միակ կէտերն են ուր հայ տարրը աւելի ստուար է քան թուրք տարրը, հակառակ բազմամեայ կեղեքումներուն որոնց ենթարկուած են անոնք: Հոյ գեղացիները լեռներն ու դաշտերը խոյս տուած են,

մերկ ու անսուաղ: Ու է պաշապանութեան յոյս չունին. և մահուրէնէ ճողոպրողները՝ ձմրան ցուրտերուն մեծ տանջանքներով անօթի ծարաւ ու մերկ մեռնելու զարհուրելի հարկին առջև անմուռնջ հրութեամբ պիտի գլուխ ծռեն:

Սուլթան Համիտ հայերէն վրէժ կը լուծէ, իր յորեխանին սպիտակափառ ճերմակութեանը վրայ արեան շիթեր արձակած ըլլալնուն: Ու այս անգամ իր դաշոյնը կը մխէ Հայաստանի սիրտը, ուսկից հայուն ամենէն կենսական արիւնը պիտի բխայ:

* * *

Ընդհանուր հայութիւնը իր ամենէն ահուելի շրջաններէն մէկը անցընելու վրայ է, գուցէ նոյն իսկ ամենէն ահուելին, շրջան մը որ կամ պիտի փակուի ազգին անկենդան մարմնին վրայ, կամ պիտի ողջունուի անոր վերակենդանութեամբը: Այս երկու վախճաններէն որո՞ւն որ յանգինք, ազգին պարտքն է կամ գէնքը ձեռքը իյնալ կամ անող ազատագրուիլ: Ճակատագրական անհասանելի դժբախտութեամբ մը, հայը ինկած է աշխարհի երկու ամենէն վայրագ ազգերուն, ռուսին եւ թուրքին ձեռքը, որոնք հրութեան ամենէն մեծ ազգերէն մէկը սպանելու իրենց քսամնելի դերին մէջ պահ մը դուր դադար չեն առներ,

ու այս աղէտալի գործին յաջողու-
թեանը համար կարծես մրցում մը
կը մղեն իրարու հանդէպ : Զնչման
գործը գլուխ հանելու մեթոսնին
հիմնապէս իրարմէ թէև տարբեր,
միևնոյն վախճանին պիտի յանդի-
ի վերջէ : Մէկը ազգայնութեան ու
գին կը մեռցնէ, միւսը ազգին մար-
մինը կը յօշոտէ : Բարոյական և
նիւթական այս կրկին հարուածնե-
րուն պիտի կրնա՞յ տակալ հայու-
թիւնը : Այսքան վճռական ըտպէի
մը՝ մեր վրայ խուժող այս հսկայ
զօրութեանց դիմագրելու անհրա-
ժեշտ պայմանները ըմբռնելու խե-
ղացութիւնը և ողջմտութիւնը պիտի
ունենա՞նք վերջապէս : Ուժերու և
գազափարներու հերձուածին կա-
տարեալ աղէտ մը ըլլալը ո՞ր թուա-
կանին պիտի հասկնանք : Պիտի շա-
րունակե՞նք, օրինակի համար,
վիսպուրականի ներկայ տակնուվը-
րայ ու ցաւատանջ վիճակը վերա-
գրել յեղափոխական կուսակցու-
թեան մը երևակայական դաւակ-
ցութեանը ուս կառավարութեան
հետ, պիտի շարունակե՞նք՝ ազգ,
փրկութիւն, գոյութեան խնդիր
և այլն մոռցած՝ մէկ անձի մը ան-
հատական աննշան ու փցուն հար-
ցովը զբաղիլ գիշեր ցորեկ, այս
պատճառաւ զէնքերնիս սրած իրա-
րու դէմ, այն զէնքերնիս որ մեր
փրկութեան ամենէն անհրաժեշտ ու
հարկաւոր միջոցը պիտի ըլլային :
Պիտի շարունակե՞նք արատաւորել

մեր այն տաղանդաւոր գործիչները
որոնք այսօր արտասահմանի մէջ
խղճամտօրէն ազգին բարոյական
բարձրացման, անոր վրայ տիեզե-
րական համակրութիւն ու հետա-
քըլքըութիւն հրաւիրելու կարեւոր
գործին ուժ կուտան՝ աչքի զարնող
արդիւնքներ ձեռք բերելով : Վեր-
ջապէս պիտի շարունակե՞նք անգի-
տանալ համերաշխութեան հրաչք-
ները :

Ոչ ոք կրնայ կասկածիլ որ բոլոր
այս ծանր հանգամանքներուն շա-
րունակութիւնը աւելի սրոշ, աւելի
անսխալ կերպով մեր մահացումը
պիտի վճռէ քան թուրք կամ
ուս կառավարութեանց բնաջնջու-
մի ծրագրին գործադրութիւնը :
Մեր այս ներքին երկպառակուած
դրութեամբ ուրիշ ոչինչ պիտի կըր-
նանք ընել եթէ ոչ սատարել, ուժ
տալ մեր թշնամիներուն եղեռնա-
կան դիտաւորութեանց յաջողօրէն
պսակուելուն, դիտաւորութիւններ
որոնց վիժումը անվհատ ու միահա-
ղոյն մարտնչումի միայն կարօտ է :

Ռուս կառավարութիւնը հայուն
ազգային բեղմնաւորման բոլոր դե-
տինները ամլացնելու գործը առաջ
կը տանի կոյր մարդնութեամբ մը :
Թուրք կառավարութիւնը, համու-
ձայն իր վանտալական սովորութեան,
կը հետամտի կոտորելով ու սնծօթի
մեռցնելով անհետացնել հայը աշ-
խարհի երեսէն : Իսկ մենք հայերս
ալ, իսկ մենք մը անգիտակցութեամբ

բը, փոխանակ միահամուռ կերպով
գոտեպնդուելու արտաքին այս թըշ-
նամիններուն դէմ, ներքնապէս քայ-
քայուած, շլատուած, մէկդի կը
նեաներ գիմադրութեան անհրա-
ժեշտ միջոցները, ու գլխիվայր կը
խիզախենք այն անել ու դերուկ
ճամբաներուն մէջ ուր թշնամիք գա-
րոնակալ մեզ կսպասեն:

* *
* *

Հակառակ սակայն աղէտալի ան-
միաբանութեան որ ազգին ամենէն
կենսական ուժերը կը քամէ, յի-
շափոխութեան գործը կը շարու-
նակէ ու պիտի շարունակէ, սայ-
թաքելով, անհուն, վհատեցուցիչ
դժուարութիւններու բախելով ա-
մէն մէկ քայլին: Անիկա ամէն
պարագայի մէջ պիտի շարունակէ
սակայն բեղմնաւորիլ, ուռճանալ,
իբրև միակ յինակէտը որուն կըր-
թընած կը կենայ հայութիւնը
դանդաշուն: Բոլոր այն վարդա-
պետութիւնները որոնք կը ձգտին
հաւտացնելու թէ 300,000 հոգինե-
րու փճացումէն առաջ թէ ետքը՝
յեղափոխութիւնը, այն եղանակով
որով սկսուեցաւ ու գործադրուե-
ցաւ, անհարկի էր ու վնասակար,
արգիւնք են ազգային վերջին քա-
ռասնամեայ կացութեան ազէս ու
ցաւագար ըմբռնումի մը, կամ
կանխակալ և անձուկ մտքերու ան-
սողութեան: Կոտորածները ծրագ-
րուած, վճռուած բաներ էին, ու

անոնց գործադրութիւնը կախում
ունէր միմիայն տարճանակի մը
պայթումէն, կամ « և է տար-
նման շառաջէ մը, պատրուակէ
մը վերջապէս, որ ծառայէր իբրև
նշան ջարդերու սկզբնաւորութեան:
Այս ծրագիրը Սուլթանին սեղանին
վրայ երկար ատենէ ի վեր կը կենար,
երբ տակաւին հայ յեղափոխականը
իր ուսմբին նիւթերը պատրաստելու
իսկ հետամուտ չէր:

Կը յիշեմ կարգացած ըլլալ Քը-
րանսերէն դիրք մը, Աթէնք տըպ-
ուած 1881 ին, — այսինքն հայկա-
կան կոտորածներէն տասնըջորս
տարի առաջ, — որուն հեղինակը,
Համիտի ճանկէն խոյս տուած յոյն
մը, Աքալիէրի, մտերիմ բարեկամ
Սուլթան Մուրատին, տեղ մը որոշ
կերպով կ'ըսէ. « Փոքր-Ասիոյ քա-
ղաքներուն մէջ ջարդեր պիտի կազ-
մակերպուին: » Այս խօսքը ընողը
հեղինակաւոր մարդ է և կատարեալ
գիտակցութեամբ ու խորին համոզ-
մամբ մըն է որ կը գրէ: Ու այդ
թուականին հայկական խնդիրը դեռ
61րդ յօդուածին մէջ խաղաղօրէն
կը քննար:

Երեք տարի է որ յեղափոխական
« և է շարժում չիկայ. և սակայն
հարստահարութիւնները, կոտորած-
ները լռելեայն կը շարունակուին,
Սպաղանքը կը ջնջուի, վանն ու
Մուշը անգթօրէն կը հարուածուին,
օսմ. կայսրութեան ամէն կողմը հա-

յերը կը հալածուին վտանգաւոր շիկերէններու պէս՝ որոնցմէ իբր թէ երկիրը ազատելու կոչում ունենար երբեք մարդասպան-որսորդը։ Ասոնք ամէնքը կըլլան, առանց որ յեղափոխութիւնը արդարացուցիչ պատրուակներ ընծայած ըլլայ։

Ուրեմն յեղափոխական կազմակերպութիւնը գոյութիւն ունենայ կամ ոչ, հայերուս նկատմամբ թուրք կառավարութեան գծած մեթոտը նոյնն է ու անփոփոխելի։

Արդ, մենք այժմ կրկէսի մէջ նետուած մարդեր ենք, ուր մնեցնած ցուր մեր վրայ կը խուժեն. ձեռուընիս գտնուած ս և իցէ զէնք, ս և իցէ եղանակով՝ պիտի ծառայեցընենք մեր անձը պաշտպանելու գազաններուն գէմ, որչափ ստեն որ կարելի ըլլայ. այն վայրկենին ուր, յուսահատ, ուժասպառ, մէկգի նետենք զէնքերնիս, գազանները արիւնլուայ կծիկ մը պիտի ընեն զմեզ. ու կըրկէսին հանցիտականները, որոնք գուցէ զգնութեան հասնէին մեզի եթէ քիչ մը ևս տոկայինք, պղատոնական արգահատանք մը միայն պիտի արտայայտեն։

Ինքնապահպանութեան բնազդը կը յորդորէ զմեզ զէնքերը չթողուլ մինչև նախախնամական օգնութեան մը ժամանումը։ Բոլոր հայութիւնը այս նպատակին կը վազէ ու պիտի վազէ, հակառակ զինք կասեցնելու համար եղած եղբւնական փորձերուն. և այդ նպատակին ապահո-

վապէս հասնելու համար՝ նախ պէտք է որ չխրտչի իր գոյութիւնը վտանգող ահաւոր ծրագրի մը արիւնտադրուագներէն, ու, ամենէն աւելի, իր կարգերը սեղմելու է համերաշխութեան պինդ կապովը, եթէ չուզեր ինք իր ձեռքովը փորել գերեզմանին փոսը, ուր պիտի թաւալի գահալիւծօրէն։

Ու այն ատեն ոչ ոք իր վրայ արցունք մը պիտի թափէ։

Երուանդ Մումախչիանկեան



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ ԶԳՈՒՇ ԿԵՅՑԷՔ

Ութն օրէ ի վեր ճշմարիտ վարանումի մէջ եմ։

Կը մտածեմ թէ ի՞նչ դարձուածքներ գործածելու է որ առանց անհաւատ մը ենթադրուելու, վրաս անխճքներ հրաւիրելու, կրօնականներէն բանադրուելու եւ ի բնէ բարեխրատ (!) բայց չար լեզու ծնած կիներու բամբասանքներուն ենթարկուելու՝ գիտական քրոնիկագրի պարտքս կատարեմ, բացատրելով մեր ժողովուրդին թէ եկեղեցի երթալուն եւ հոն ժամերով մնալուն մէջ իրական վտանգներ կան, թէ կրօնական կարգ մը աւելորդապաշտութիւններու հետեւ-

լէն մեծամեծ գծրախտութիւններ կը ծնին եւայլն, եւայլն:

Վստահ եմ որ այս գիտական արձագանգը կարգացողներէն շատերը պիտի ըսեն թէ ըրածս աններելի ամբարշտութիւն մըն է, թէ ես թերահաւատ մըն եմ ու գերագոյն զօրութեան վրայ բնաւ գաղափար չունիմ, թէ եկեղեցիին մէջ միքրոպը զօրութիւն չկրնար ունենալ եւ նոյն իսկ միքրոպ ալ չկայ — բաց ի եթէ ինձ նման մարդիկ ներս սպրդած ըլլան —, թէ հիւանդութիւնները բոյն չեն կրնար դնել հոն ուր մարդիկ աւելի հողով եւ մարմնով բժշկութիւն կը գտնեն քան ախտերու սերմերէն կը վարակուին եւայլն. ու պիտի ըլլան անշուշտ ըսողներ ալ, ինչ որ շատ բնական է, թէ ես՝ գիտութեան մէկ վիժածը՝ առողջապահութեան քողին ներքեւ կը ջանամ անհաւատութիւն քարոզել եւ միտքերը պղտորել!!!:

Ո՛չ, ասոնց եւ ոչ մէկն է: Կը մերժեմ ամէն ինչ որ ենթադրութեան եւ ամբաստանութեան գոյնով կը ներկայանայ: Ինձի կը վերապահեմ անհատական ըմբռնումներս կրօնքի մասին ու երբեք չեմ ուզեր ազդել ուրիշին համոզումներուն, հաւատքին եւ մտքին վրայ. բայց միւս կողմէ անհնարին է ինձի ծածկել վստանգը որ կայ. պէտք է որ ժողովուրդը գիտնայ թէ ի՞նչ կընէ, ու ի՞նչ անակնկալ գծրախտութիւններու կենթարկուի երբ քիչ մը չափէն աւելի կոյր ջերմեռանդութեամբ եւ կատարեալ անգիտակցութեամբ անխոհեմութիւններ կը գործէ ու չարիքը ծնելէն ետքը շուարած կը մնայ, հարցը ներով ինքնին թէ ո՞ւր կ'իջ եկաւ անիկա, ինչո՞ւ եկաւ եւ ո՞վ է արգիօք անոր պատճառը:

Մնդիրը այն է որ ըսածներս քիչ մը աւելի լրջութեամբ ու արամբանօրէն նկատի պիտի առնուի՞ն, թէ ոչ ժայռին վրայ ցանուած ցորենի հատիկին նման ամբողջեան պիտի դուրսուտարտուին: Հաւանականը վերջինն է եւ ասիկա գիտնալով էր որ վարանում մը կըզայի մէջս եւ զուր տեղը դատապարտուելու վտանգը յանձն չէի ուղեր առնել. բայց անգամ մը որ սկսայ պէտք է վերջացնեմ. ինձ համար կարեւորը ըսելն է. ժողովուրդին ըսել թէ՛ առողջապահութեան համար կարեւոր պայմաններ կան զորս կանգիտանայ բացարձակապէս:

Արդ, մանրէաբանութիւնը որ արգարեւ եկեղեցին հաստատուած թուականներուն մէջ դեռ ծնած չէր, այսօր փորձերով եւ զօրաւոր փաստերով կը հաստատէ թէ մանրէն (միքրոպ) եկեղեցիին մէջնալ գոյութիւն ունի, ինչպէս արդէն ամէն հաւաքումի տեղեր, վարժարան, բանտ, հիւանդանոց, թատրոն, պաշտօնատուն, դօբանոց եւայլն:

Տօբթօր Ռէմլինկէր, Թունուզի մանրէաբանական աշխատանոցին պետր, ուսումնասիրութեան մը մէջ կընէ թէ՛ եկեղեցիները, ուր օրինակելի մաքրութիւնը իր բացակայութեամբը միշտ կը փայլի, մէյմէկ մնայուն վառարաններ են կարգ մը տարափոխիկ հիւանդութեանց միքրոպներուն, ինչպէս հիւժախտի, սֆերիկ, ծաղիկի, կարմրախտի եւայլն: Այս քարշելի միքրոպները գուրէն կուգան, հաւատացեալներուն հետ, անոնց հագուստին կամ մարմնոյն միջոցաւ:

Ընդհանրապէս գիտուած է որ ոտքի վրայ հիւանդկախ մարդիկ իրենց օրական զբաղումներուն մէջ զլիսուոր տեղ մը կուտան եկեղեցիին, յաճախ

հոն կերթան եւ ժամերով կաղօթեն րփշկութիւն գտնալու յոյսով: Այդ հիւանդներուն մէջ վաանգաւոր ատերու միքրոպը ունեցողներ ալ անշուշտ կը գտնուին, որոնց մէկ ամենափոքրիկ հազը, փռնդտուքը, հառաչանքը եւ կամ լիւաշուրթն աղօթելը կրնան գետինը, դիմացինին կամ հոն գտնուած մէկ առարկային վրայ թուքի կաթիլ մը ցայտեցնել, որ միլիոնաւոր անտեսանելի մահացու ճճիներ կը պարունակէ, եւ որոնք շատ մեծ գիւրութեամբ կանցնին առողջ մարդուն ալ՝ անմիջապէս որ անոնց մօտենայ:

Նոյնպէս, աղքատ մարդիկ, որ չեն կրնար սովորաբար ինքզինքնին մաքուր պահել, իրենց հագուստներուն ծերպերուն մէջ անգիտակցաբար միքրոպներ պահած կուգան կը խոնուին ժողովուրդին մէջ եւ հոն բաւական քանակութեամբ ձգելով կելլան կերթոն. այդ մարդիկն ալ իրենց գործերուն յաջողութեան եւ նեղութիւններէ ազատուելու աղօթքը կընեն, առանց մտածելու թէ ուրիշին առողջութիւնը վտանգելու պատճառ կըլլան:

Դարձեալ փոքրիկ աղաքները որոնց կարգ մը հիւանդութիւնները ընդհանրապէս շուտ երեւան չեն դար եւ մէկ երկու օր ետքը միայն կը յայտնուին, կրնան ունեցած ըլլալ վտանգաւոր միքրոպ մը եւ անգիտակցաբար կուգան կը խառնուին ուրիշ աղաքներու եւ անոնց հետ մտերմութեամբ վարուած ատենին ամիջապէս միքրոպներ կը փոխանցեն:

Այս փոխանցումը, սակայն, անպատճառ ուղղակի մարդէ մարդ տեղի ունենալու պայմանները չի փնտռեր. փոշիով ալ, նուիրական առարկանե-

րու մօտենալով ինչպէս նաեւ ատոանդ քսուելով ալ կը կատարուի ու կարժէ որ ուշագորութիւննիս կրկնապատկենք այդ կողմերուն վրայ:

Յիշեցի արդէն թէ հազալէ, փռնդտալէ եւ հառաչելէ թուքի կտորուանքներ դուրս կը սպրդին մարդուն բերնէն, որոնք միքրոպներ կը պարունակեն եւ այս միքրոպները կը տարածուին ամէն կողմ փոշիին միջոցաւ ու կերթան կը մտնեն մինչեւ ուրիշներու քթին ծակը, կոկորդին խորը կամ թոքերուն մէջ:

Ամէնապարզ շօշափումով մը պիտի տեսնենք որ եկեղեցիին պատերուն, քարերուն, նստարաններուն եւ ամէն առարկաներուն վրայ հինաւուրց փոշիներ դիզուած մնացած են. այս փոշիները կամ եկեղեցիին վերիվերոյ աւլուելէն գետնէն վեր կը բարձրանան, կամ կիներու քղանցքներուն յարուցած շարժումէն եւ կամ փոքրիկ տղաքներու անհանդարտ ընաւորութենէն, եւ երբ կը մօտենանք անոնց ու քիչ մըն ալ մենք կը յուզենք անոնց արդէն անկայուն վիճակը, ինչ պատճառ կայ որ անոնք ալ երես աւած մանուկներու նման մեր վրայ չգան, մեզի չփարին ու պարունակած միքրոպներն չփոխանցեն:

Մեր ժողովուրդը ջերմեռանդ է, կը ծնրադրէ, գետինը կը համբուրէ ու ձեռքերով գետինը շօշափելէ յետոյ երեսին կը տանի խաչ հանելու համար. այս ամէնուն մէջ միքրոպը արդեօք յարմար առիթը գաած չի՞ համարի: Ասկէց զատ, կը խոստովանինք ալ, պահարան կերթանք, որ մեծ տաճարին մաքրութեան չափ մաքուր է, գետինը կը նստինք, քահանային քղանցքին ներքեւ, քով քովի, շունչ շունչի, ու մեղքերնիս կը խոս-

սովանինք արձակում գտնելու համար
և իբրև վերջաբան կը համբուրենք
քահանային ձեռքը, ամէնքս մէկ ձեռք
և միեւնոյն տեղը, ու կը բաժնուինք
իրարմէ անվրդով, հոգւով բժշկուած,
բայց . . . գուցէ մարմնով վարակ-
ուած, վասն զի ո՞վ կրնայ երաշխա-
ւորել քահանային ձեռքին մաքու-
թիւնը և կամ մենէ առաջ այդ ձեռ-
քը համբուրողին առողջ մարդ մը
ըլլալը:

Խումբ խումբ կը զիմենք վանքեր
և ուխտատեղիներ, կը զիշերենք,
գետինը, ամէնուն հետ, ենթարկուած
աներեւակայելի վտանգներու. այդ
տեղերը կայ հիւանդութիւններուն
ամէն տեսակը, մարդոց մաքուրն ալ,
աղտոտն ալ և միքրոպին ալ է՛ն
հրաշալին:

Պօլիս Ղալաթիոյ եկեղեցին, ուր
Ս. Փրկչի մասունքը կը գտնուի և
ամէն եկեղեցիներու մէջ ուր խաչա-
հանգիստ կը կատարուի, մարդ ի՞նչ
անխոհեմութիւններ չի գործեր գառ-
նուկի նման իրարու նայելով:

Հարիւրաւոր, երբեմն հազարաւոր
հոգիներ կրօնական արարողութիւն-
ներէն ետքը կարգաւ կը համբուրեն
աւետարանին, խաչին կամ մասուն-
քին միեւնոյն տեղը ու յետոյ ի լրումն
անխոհեմութեան կերթան կը խմեն
օրհնած ջուրէն միեւնոյն զգալովը,
զայն աչքերնուն կը քսեն, քիթերնուն
բերաննուն կը տանին և կամ պատ-
կերները, խաչքարերը և պատերը
կը համբուրեն անհոգ անփոյթ և ան-
վերջանալի կերպով:

Դարձեալ երբեմն քանի մը հարիւր
հոգիներ միեւնոյն մատուրներուն
միջոցաւ կը հաղորդուին և միեւնոյն
բաժակէն, և զեռ ինչե՛ր . . .

Արդ, ո՞վ կրնայ ըսել թէ այդ

խաչը, աւետարանը, մասունքը, քա-
րերը, պատկերները համբուրողներուն
և ջուրը խոողներուն կամ հաղորդ-
ուողներուն մէջ թորախտաւորներ,
պէտքեր և ուրիշ միքրոպներ ու-
նեցող մարդիկներ չկային ու յաջոր-
դաբար ուրիշներ ալ չվարակուցան
երբ տրամադրութիւններ ունէին:
Իրաւ է թէ խաչին կամ մասունքին
գլուխը նստող քահանան երբեմն եր-
բեմն լաթով մը և միեւնոյն լաթովը
կը սրբէ, սակայն այդ լաթը մաքուր
կը մնայ անգամ մը որ գործածուի:

Ղաթին եկեղեցիին մէջ մատը օրհ-
նուած ջուրը թաթ խելու և խաչա-
կրներէլու սովորութիւնը կայ. արդ,
Տօքթօր Ապտ կրտէ թէ Թիւրքնի եկե-
ղեցիներուն օրհնած ջուրին մէջ թո-
քախաի պէտքեր գտած է: Այդ ջուրը
որ հասարակ ազի և ջուրի խառնուրդ
մըն է, իր մէջ միքրոպներ կուտնայ
փոշիին և մէջը մտած մատուրներուն
միջոցաւ ու շատ անգամներ ալ օրե-
րով կը մնայ և կը հիննայ:

Ի՞նչ ընելու է ուրեմն որ մեր ժո-
ղովուրդը զերծ մնայ այդ վտանգնե-
րէն, առանց հաւատքէն խախտելու:

Ըստ իս, քանի որ կրօնական օրի-
նագիրքերուն մէջ արգելք մը չկայ,
եկեղեցիները պէտք է ենթարկել հա-
կանեխելու դրութեան, բժշկական
այցելութիւնները անպակաս ընել,
զանոնք շատ մաքուր և առանց փո-
շիի պահել և վերցնել կարգ մը աւե-
լորդապաշտութիւններ, գետին համ-
բուրել, գիշերել, եւայլն, եւայլն:

Բնական է որ խաչը, աւետարա-
նը կամ մասունքը ամէն վայրկեան
հականեխական փուռը կարելի չէ նե-
տել և ոչ ալ օրհնած ջուրին մէջ պէտք
խառնել, սակայն վերջապէս ամէն
մարդ կրնայ փոքրիկ մաքուր շիշ մը

բերել եւ հետք առնել տանիւ օրհնած ջուրը. իսկ խաչհամբոյրի, քարհամբոյրի եւ այլնի մասին ոչինչ կրնամ բսել. վասնզք միշտ վասնզ է եւ ով որ կուղէ առողջ մնալ, պէտք է զգուշանայ:

Եկեղեցիին մէջ պարզօրէն միայն աղօթելը կը բաւէ հոգիի փրկութեան համար, իսկ ծայրայեղութեամբ մարմնի առողջութեան քայքայուելուն եւ նոյն իսկ մահուան պատճառ ըլլալը չեմ կրնար բժրանել:

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



ԿԵՂՇԱԻՈՐ ՄԸ

Երկասարդ-թուրքերուն կարծեցեալ կուսակցութեան օսկան Մեշլիերէթի նոյեմբեր 1 համարին մէջ Ահմէտ Րիզա էֆէնտին կը խօսի միջազգային համաժողովներուն վրայ, որոնք Բարիզ գումարուեցան Ցուցահանդէսին առթիւ: Մասնաւորապէս կը ծանրանայ խաղաղութեան համաժողովին վրայ, ուր ներկայացաւ հայկական խնդիրը կարեւոր հանգամանքի մը ներքեւ, ինչպէս արդէն ծանուցին արտասահմանի բոլոր հայ թերթերը:

Թուրք կուսակցապետը, — եթէ կարելի է այսպէս անուանել քանի մը դժգոհներու երեւակայութեան մէջ ծնունդ առած մարմնի մը վա-

րիչը, — քաղաքավար, ու քիչ մըն ալ սղոքիչ ֆրազներու տակէն ըզգայնել կուտայ ընդհանրապէս հայերուն եւ մասնաւորապէս հայկական խնդրին դէմ սնուցած խորին, մղբռանդ ասեղութիւնը, և մասնաւոր կատաղութիւնը զոր կզգայ երբ միջազգային համաժողով մը գրեթէ միանուագ ու ինքնաբեր կերպով իր ջերմ համակրութիւնը կը յայտնէ հարստահարուած հայ ազգին նկատմամբ: Ահմէտ Րիզա իրօք պարզապէս զաւելտական կը դառնայ այն պահուն ուր համակրական ցոյցեր ու որոշումներ կըսպասէ իր համեստունակ (°) հայրենակիցներուն համար, որոնք բոլորն իններու պէս յարձակեցան աշխարհի ամենէն հանդարտ, հեզ ու անմլաս ժողովրդին վրայ՝ արիւնարբու եղեւնագործի մը մէկ նշանովը: Քիչ մնացած է որ Րիզա էֆէնտի համակրութեան բաժին մըն ալ իր սիրասուն քիւրտերուն համար խնդրէր, որոնք իր խօսքով համամահաւասար առանձնաշնորհումներու իրաւունք ունին եղեր հանդարտօրէն տպրելու համար մեր «կարծեցեալ Հայաստան» ին մէջ:

Համաժողովին ներկայ գտնուող հայերուն քաղաքավարութեան և փափկութեան դաս տալու յաղբանող այս տաճիկը Հայաստանին քով կարծեցեալ բառը քշած ատեն՝ պարտուոր էր նկատի առնել այն խորին և սնբուժիկ վիրաւորանքը

զոր կը պատճառէր ներկայ հոյե-
րուն, նկատելով որ ինք, իմացու-
կանապէս զարգացած մէկը, գիտէր
թէ այդ երկիրը մշտականօրէն
պատկանած է հայերուն, որոնք թէև
բիրա ուժերու տակ ընկճուած՝
դարձեալ բարոյապէս ու նիւթապէս
տիրող տարրը եղած են հոն, թէ
պատմութիւնը Հայաստան անուան
տակ միայն կը ճանչնայ այդ երկի-
րը, թէև անիկա թուրք բարբարոս-
ներու թունաւոր շունչով ապական-
ուած ըլլայ այժմ, թէ հայերը՝ իրենց
նախահայրերուն սակորներովը շաղ-
ուըւած ու անոնց ինկելի յիշատակ-
ներովը յաւերժօրէն թրմուած
երկրին վրայ իրենց ունեցած իրա-
ւունքներէն ոչ մէկ ժամանակ, ոչ
մէկ պարագայի մէջ կրնան հրաժարիլ
և թէ անոնք երբեք չպիտի դադարին
անոր սեպհականութիւնը ազատօ-
րէն վայելելու ակնկալութիւնը սը-
նուցանել :

Ահմէտ էֆէնտիին դիտողութեա-
նը ներկայացուելիք կարեւոր կէտ
մըն ալ կայ. ինք կըսէ թէ Հայաս-
տանի մէջ ոչ միայն թուրքերը այլ
և քիւրտերը աւելի բազմաթիւ են
քան հայերը, պատճառ մը որ՝ հա-
յերը ու է մասնաւոր առանձնա-
չնորհում վայելելու իրաւունքէն
զրկուին եղեր :

Երիտասարդ-թուրքը որ տարինե-
րէ ի վեր Եւրոպա կապրի, այսինքն
քաղաքակրթութեան բուն կեդրոնին
մէջ, գիտնալու էր որ երկրի մը

վրայ տիրելու իրաւունքը առաւե-
րապէս կիյնայ այն տարրին, որ ի-
մացական և բարոյական ընդածին
գերակշռութիւնը ունի իր կողմը :
Այսպէս, Հայաստանէն հանելով
հայը, որ անզոյն միակ տարրն է
օժտուած յառաջգիմութեան յար-
մար ամէն յասկութիւններովը, կու-
նենանք երկիր մը վայրենիներէ, այ-
սինքն քիւրտերէ ու թուրքերէ
բնակուած : Կը մաղթէի որ ասանկ
երջանիկ ու մտատիպար երկրի մը
պեսն ըլլար Ահմէտ Բիզա էֆէնտի-
ի մարդախաշոշ ու անսանձելի
հայրենակիցները քաղաքակրթելու
և յառաջացնելու դժոխային գործն
ստանձնելով : Երբ ինքը այնքան
կարեւորութիւն կուտայ թուական
կոչտ առաւելութեան մը որ մինչեւ
իսկ սքանչելի երկիր մը իր բուն ու
արժանաւոր տէրերուն ձեռքէն խը-
լելով կուտայ վայրագ ջոկիրներու,
ան ատեն կրնայ իր հաշուին մէջ
առնել Հայաստանի անտառներուն
ու լեռներուն բնակիչներն ալ,
գայլերը, վագրերը, արջերը, որոնք
Ֆիզիքապէս ու բարոյապէս այնքան
սերա մտաւորութիւն ունին իր
սիրելի հայրենակիցներուն հետ և
որոնք բաւական զօրաւոր կերպով
պիտի ստուարացնեն իսլամ՝ բնակ-
չութեան թիւը :

Եւ յետոյ, Ահմէտ էֆէնտի իր
կարծեցեալ հայրենիքին բոլոր ցեղերը
անկողմնակալ և լուրջ ուսումնասի-
լութենէ մը անցընելէ ետքը, ապա-

հովապէս պիտի գար սա եզրակա-
ցութեան յանգէր որ այդ ցեղերուն
մէջ հայը միայն, իր անժխտելի
յատկութիւններովը, քիչ տոնե-
ուան մէջ մտաւորական, նիւթական
ու նսեւ թուական անհամեմատ
առաւելութեամբ պիտի գերա-
զանցէր իր բնակակից ցեղերը՝
եթէ վարչական փոփոխումով
մը իր կեանքը, ինչքը և պատիւը
սպառնով դրութեան մը մէջ դըր-
ուէին: Կը սխալի, ու ինքն է որ
ծիծաղելի կը դառնայ երբոր կը
կարծէ թէ Հայաստանի մէջ հայու-
թեան թիւը զգալի փոփոխութիւն
չգտաւ Սուլթան Համիտի աղէտա-
ւոր տիրապետութեան ներքեւ. կո-
տորածները, կեղեքումները, թըշ-
ուառութիւնը, անօթութիւնը, պան-
գըլխութիւնը անհազին հարուած
տուին հայ բնակչութեան թիւին Հա-
յաստանի մէջ: Սակայն հայը այն-
քան կը սիրէ իր գեղեցիկ ու ար-
դաւանդ հայրենիքը որ առաջին
առթիւ որ հոն հանգստութեան ու
անգորրութեան շունչ մը փչէ, սպա-
նող ու սպառող բռնակարութեան
մը լուծը վերնայ այդ տարաբախտ
երկրին վրայէն, աշխարհի ամէն
կողմերէն գունդագունդ պիտի վա-
զէ հոն վայելելու անոր բոլոր կեն-
դանարար բարիքները: Ու այն ա-
տեն Սհմէտ Րիզաները թող տես-
նան թէ որո՞ւնն է եղեր այն երկի-
րը, ուր թասեաց ձիւնասպիտակ
ու վեհաշուք կատարը վաթսուն

դարէ ի վեր լուռ վկան կը հանդի-
սանայ իր վշտաշարչար զակներուն
ամենի պայքարին ընդդէմ բարբա-
րոսական վիթխարի հոսանքներու,
որոնք կանցնին կերթան արիւն,
ամայութիւն, աւերակ ձգելով ի-
րենց ետեւը:

Ու հայոց նկատմամբ ամենէն նա-
խատական ու վիրաւորիչ բաները
ըսեցէն յետոյ, Ահմէտ Րիզա յան-
գըզնութիւնը կունենայ իր թերթին
մէջ գրելու. «Այս գիտողութիւնը,
որ ամենեւին անիրաւ չէ, ոչ ալ
վիրաւորիչ հայոց համար, — սպա-
թէ ոչ երբեք չէի ընել զայն — այս
վերջիններուն զայրոյթը շարժեց...»
Ու գունհիկ կերպով կը հեգնէ Պ.
Չօպանեանը, որ բեմ վազեր է
յայտարարելու համար թէ այլ ես
համարումը վերցուցած էր իր (Ահ-
մէտ Րիզաի) վրայէն: Պ. Չօպան-
եանի բողոքի այդ ազնիւ քայլը ան-
շուշտ դովեստի արժանի է. միայն
զարմանալի կը գտնանք որ մինչեւ
այդ վայելեանը ո և է համարում
կը տածէ եղեր թուրքի մը նկատ-
մամբ, որ — իրեն հետեւող քանի
մը ողորմելի աղանդաւորներուն հետ
մէկտեղ — շատ աւելի վտանգաւոր
թշնամի մըն է հայերուն և հայկա-
կան դասին քան նոյն ինքն Սուլ-
թան Համիտ:

Ու զաւելչոր կատարեալ ընելու
համար, երիտասարդ-թուրքը կեղ-
ծիքի հրաշակերտ մը կարտողրէ
սապէս աւարտելով իր յօդուածը:

« Բայց փոքր օտար խմբակի մը (հայերը) անփափկութիւնը երբեք չպիտի կրնայ արդիւիւն զիս սիրելէ իմ հայ հայրենակիցներս և ամբողջ կեանքիս մէջ կուուելէ՝ պաշապանելու համար անոնց օրինաւոր իրաւունքները » :

Ողորմելի ճիգուի՛թ :

Ն . Ս .



Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

(Ա Ե Պ)

Փլիկկած տախտակորմի մը առջև կանգ առաւ Գառնիկ, հրեց փայտէ ցած դուռ մը ու ներս մտաւ : Խորը անխնամ պարտէզի մը, ուր մէկ քանի ծառեր կերերցնէին իրենց մերկ ու դօս ճիւղերը, հողէ շինուած երեք խրճիթ կար, գետնէն հազիւ մէկուկէս մէթր բարձրութեամբ, մէյմէկ փոքր պատուհանով ծակուած : Գաղթականը գողունի քալուածքով մօտեցաւ մէջտեղի տնակին, որ մութի մէջ թաղուած էր : Պահ մը ականջ դրաւ . ձայն ձուն չիկար : Հովը պարտէզին տախտակորմը կը ճոնչացնէր ու ծառերուն մէջէն կ'ոռնար սգալի կողկողմամբ : Երկար ու խղուկ շէնքերուն տակ գաղթականները կը քնանային մահուան արհաւիրքին յաջորդող անդորր ու երկարաշունչ քունով մը :

Գառնիկ, գինով ու վարանոտ, դրան առջև կեցած, մտիկ կ'ընէր :

Մտիկ կ'ընէր աւելի իր գանկին տակ վժվժացող խառնաշփոթ մտածմունքը՝ վրդովուած սառնաշունչ քամիէն, մահաւանդ այն տարօրինակ կացութենէն, ուր ինք կը գտնուէր գաղթականութեան տաժանագին կեանքը սկսելէն ի վեր : Իր տունը, իր հարգատ ընտանիքին քովը դարձող մարդու մը անկեղծ ու համարձակ ընթացքը չէր իրը : Կը վարանէր այդ դրան առջև, վարանումովը աւազակի մը որ ոճիր մը գործելու անեղօրէն հանգիսաւոր բոպէին հանդէպ կը գտնուի :

Կը դողար հոն, կորաքամակ, սըրտաթափ, չհամարձակելով ոչ այդ դռնէն ներս մտնելու ոչ անկէց հեռանալու . երբեմն ձեռքը դրան բռնատեղին կը տանէր, անմիջապէս ևս քաշելով, շնչասպառ, գրեթէ սարսափած :

Յետոյ, վերջապէս, ծոնցաւ, շուրթերը փակցուց դրան ծերպին ու շըշընկաց :

— Բերո՛ւզ, Բերո՛ւզ :

Քամիին ահաւոր պայթման մէջ Գառնիկի կոշը անյայտ եղաւ : Երկար սպասումէ ետքը, ցուրտէն մտրակուած՝ մարդը հրեց դուռը որ մեծ աղմուկով կռնակի վրայ բացուեցաւ :

— Ո՛վ է ան, ո՛վ է ան, պուռաց կնոջ ձայն մը մութին մէջէն :

— Բերուզ, էս էմ, մի՛ վախնար :

Լուցկիի շէկ ճառագայթ մը իսկոյն լուսաւորեց խուցը : Գետինը տարածուած խշտիկի մը վրայ կնոջ գլուխ մը ծրագրուեցաւ, թնձուկ մազերու մացառով մը, դէմքի զարհուրագին արտայայտութեամբ : Գառնիկ իսկոյն վառեց անկիւնը դրուած լամպար մը, ու ինքն ալ ծալլապատիկ նստաւ գետինը :

— Բերո՛ւզ, ասօր մարդ էկա՞ւ :

— Աչկը քօռնայ, նորէն բոօզ Ղու-

կասը էկաւ. վաղը պիտի էրթամ կը-
ռիւ քիւթիւրտի ընեմ, տակնու-
վրայ պիտի ընեմ ամէն պահ. հի-
ւանդանոցը ինկիւնդին աղջկանը
կլիտուն պիտի փլցունեմ:

Խօսած պահուն, կնոջ մանր սեւուկ
աչուրները դիւականորէն կը վառ-
վրոէին ճակտին վրայ ինկած մազե-
րուն տակէն, ու բերնին շուրջը փըր-
փուր մը գոյացած էր իսկոյն: Այդ
միակ անունը բորբոքած էր զանի.
չապիկին բաց մնացած ճեղքէն լանջքը
կերեւար, որ կելլար կ'իջնար ընդ-
հատ հեւքով մը:

— Այ մարդուն խերը անիծելու է,
մրմոաց Գառնիկ զսպուած կատաղու-
թեամբ մը, գաղթականներուն պէլան
էզաւ:

Բայց յանկարծ խօսքին տարբեր
զարձուածք մը տալով, ու ձայնին
ալ մնղրոտ քաղցրութիւն մը.

— Բերուզս, ըսաւ, ալ ասկէց ետ-
քը հոս պիտի մնամ ա. մեր խօսքը
իստո՞ր էր:

Կինը ծոծրակը քերեց, անկողնին
վերմակը շտկեց ոտքերուն վրայ, ու
մրմոաց՝ վերաւոր վագրի մը բովան-
գակ մոլեղնութեամբը.

— Էս ան բոռին խե՛րը պիտի ա-
նիծեմ:

— Տուն ան գործը ինծի ձգէ, Բե-
րուզ. հիմա մենք մեզի նայինք: ...
Բերուզս, ես վրում, տո՛ւն կիտես...
մեր աղէկութանը համար: Է՛ս մի-
նակ մէկը, տո՛ւն մինակ մէկը, իրա-
րու քով էկանք տէ չօճուխ մըն ալ
կտանք մի՛ էղաւ աղուոր, չէնք
չնորհք ընտանիք մը: Հէ՛մ, ինծի
նայէ, ան միսկին բոռը աստեղէն
օտքը ներս չի կրնար տեսլ...

— Տղան վուրկէց պիտի կտնանք...

— Ճանրմ ան կտորը տուն ինծի

ձգէ. քանի՞ հատ կուզես քի վաղը
կտնամ... հելէ մէյ մը տուն հա՛ ըսէ:

Գառնիկին պաղատանքին առջեւ,
կինը կը վարանէր տակաւին. մարդը,
գերագոյն յոյսին կառչած, յանձն
կառնէր սողալ այդ զգուելի արարա-
ծին առջեւ, զանիկա իր առաջարկին
հաւանեցնելու համար:

— Բերուզ, օղկը պագնեմ, չէ մը-
սեր. ... քու աղէկութիւնդ կուզես նէ
չէ մըսեր...

— Բէք աղէկ, թող ըսածիդ պէս
ըլլայ...

Քանի մը վայրկեան ետքը, լոյսը
կը մարէր. ու Գառնիկ՝ իր ծրագրի-
ներուն այս յաջող սկզբնաւորութե-
նէն գո՛հ կը կծկուէր խուցին մէկ
անկիւնը:

Գուրսը, հովը կը շարունակէր
մոլեղնիլ ծառերուն ու տախտակոր-
մին վրայ: Գաղթականները կը քնա-
նային խարուսիկ երջանկութեան մը
ու անստոյգ ապագայի մը տարտա-
մութեանը մէջ անզգայացած:

Բ.

Յաջորդ օրը, Գ. թաղի այդ խըր-
ծիթին բնակիչներուն մէջ իրարան-
ցում մը կար:

Լոյսը ճեղքուելուն պէս տնակնե-
րուն դռները բացուեցան՝ տեղի տա-
լով գաղթական կիներու, աղջիկնե-
րու եւ տղոց, տժգոյն զէմքերով, գի-
սախոիւ գլուխներով, աչքերնուն մէջ
անօթութեան սրտածմլիկ ցոլացում-
վը: Հագիւ զիրար ողջունած, սա
տեսակ խօսակցութիւն մը կը դառնար
անոնց մէջ:

— Աննիկ տուտու, քննիչնիդ
վո՞վ է:

— Սո՛ւս, աղջիկ, սո՛ւս, Ղուկաս աղան: Ի՞նչ պիտի ընեմ չիյտեմ, շա՛ւրմիշ ըրեր մնացեր էմ: Բո՛ւկդ որն է:

— Էրէկ կացի հիւանդանոց պօռացի կանչեցի. առ մարդը չեմ ուզեր ըսի. լացի ծեծկուեցայ. նայեցան քի չպիտի ըլլայ նէ, քննիչս փոխեցին:

— Էրնէկ քեզի... Ասօր պիտի կայ... ծուներ թէքէիս:

Յետոյ ուրիշներուն մէջ.

— Բրաբ հանրմ, քեզի ասօր քըննիչ պիտի կայ... .

— Ա՛խ, քուրս, պիտի կայ... էխտիյար ծնդած մը կայ նէ ան... Անանկ կըսեն կոր քի զալըմ զուլում մարդ մըն է, խեղճ գաղթականներուն հոգին պերանը կը պերէ կոր էղեր: Ի՞նչ ընելու է:

Պահ մը Բերուզի խցիկին զուռը բացուեցաւ, ուսկից կեղծ ամուր զուրս ելաւ մասնակցելու պարտէզին մէջ գումարուած մեծ խորհուրդին:

Գիշերուան կծու հովը կը շարունակէր փչել. հէք գաղթականները, օրուան մեծ խնդրին՝ նպաստին սիրուն համար՝ յանձն կառնէին կենալ պարտէզին մէջ, ցուրտին տակ, ձեռուընին ծոցերնին խոթած, ոտուընին գլուխնին մերկ, անօթի, եւ քննիչ Ղուկասին ուղղուած յիշոցներով ու ու անէծքներով բերաննին լեցուն: Այս Ղուկասը գաղթականներուն պատուհան էր եղած, անոնց աղքատութիւնը արհամարհելով, չհաւատալով որ անոնք ջարդէ ու կողոպուտէ իսկապէս խոյս տուած խեղճեր էին. ու իրեն օրիորդ Ֆրէյզըրի կողմէ յանձնուած քննիչի պաշտօնը տարապայման խղճմտութեամբ եւ ըմբոստուցիչ խստութեամբ ի գործ կը դնէր: Պարտէզին մէջ հաւաքուած կիներուն օրուան մեծ մտահոգութիւնը այդ մարդն

էր, որ օխտ մը հացի եւ զոյգ մը կոշիկի փոխարէն անոնց ամբողջ կեանքին մանրամասնութեանցը կուզէր տեղեկանալ: Կարծես հարցաքննիչ գատաւոր մըն էր, որ պաշտօն ստանձնած ըլլար հայ գաղթականութեան մէջէն յանցաւորները մատնանիչ ընելու:

— Փարան մնդի համար էկած է, կը պոռար պտուաւ մը բարկութենէն գողողալով, առ խոփածը վով է քի մեր հախը մեր ծառքէն պիտի սունէ:

— Քաշելիք ունինք, ճանրմ, քաշելիք ունինք, վրայ կը բերէր ուրիշ կին մը՝ զերկը մանուկ մը որուն ծիծ կուտար. հայուն բախտը ո՛ւր անդ պաց է քի. սա մասումիս վրայ կը նայի մարդ տէ կողորմի:

Գառնիկ որ Բերուզին հետ այս ողբագին տրտունջները մոտիկ կընէր.

— Հանրմեր, ըսաւ վճռական շուտով մը, առ խօսքերը փոր չեն կշատցնիր, ամէնդ մէկտեղ էլէք օրիորդին կացէք, տէրտէրնիդ հասկցուցէք անոր. անիկա աղէկ ախճիկ է... պահ մը ընէ նէ ան կ'ընէ...

— Հախ ունիս ախպարս, էն կարճ ճամբան առ է, ըսաւ կին մը:

Միւսները բոլորն ալ ձայնակցեցան, ու պարտէզին մէջ, սառնաշունչ քամիին տակ դողողալով, հայ գաղթականները որոչեցին հաւաքարար օրիորդ Ֆրէյզըրի դիմել, պարզելու համար իրենց ողբալի վիճակը, յայտնելով միեւնոյն ժամանակ քննիչ Ղուկասին շահատակութիւնները:

Քիչ ետքը, եօթը ութը կիներ, ցնցոտիներով ծածկուած, ումանք հետ առած իրենց ողբաքը, փողոց ելան հիւանդանոց երթալու համար:

Ճամբան, բամբասանքը, անէծքը, հայհոյանքը շարունակուեցան գաղ-


Թականներուն մէջ, որոնց թիւը երթալով ստուարացաւ ուրիշ գաղթական կիներու բարդումովը:

Հիմակ տրտունջները, պահանջները, անէծքները երփներանգ այլադանութիւն մը ստացած էին. այլ եւս խնդիրը մինակ քննիչ Ղուկասին շուրջը չէր դառնար. ուրիշ քննիչներ՝ իրենց կարգին՝ շրջան կընէին այդ թշուառ թափորին մէջ, անողորմ հարուածներ ընդունելով, վարձատրուելով ամենէն փայփայիչ ու ողորքող վերադիրներովը, եւ ահարկու սպառնալիքներու ու տեսակ տեսակ դաւադրութիւններու վտանգին ենթարկուելով: Այդ խումբին մէջ, ուր կիներ կը ներկայանար այն ամէն երեւոյթներուն տակ, զոր թշուառութիւնը, բարոյական անկումը, տարիքը միայն կընան ստեղծել, ոչ ոք կը մտածէր անդրադառնալ այն վրտանգաւոր հետեւանքին վրայ, որ կընար առաջ գալ գաղթականներուն անհանդուրժելի վարմունքէն, նպատինն յանկարծակի ընդհատմամբ: Քննիչներէն ետքը, եւ նոյն իսկ անոնցմէ առաջ, տառապանքէ ու վիճակի անստուգութենէ խելայեղած այդ թշուառ հայուհիներուն սլաքները կուղղուէին օրիորդ Ֆրէյզըրի, որ նպաստին բաշխման ընդհանուր վարիչ կարգուած էր Ուէսդմինսդրի դքսին կողմէ:

Պառաւ մը, մէկ աչքը կոյր ու դէմքը ծաղկոտ, թափորին մէջտեղը անցած, հայհոյանքներուն, նախատինքներուն ուղղութիւնը կուտար, հետզհետէ հասարակութեան ներկայացնելով բողոքի ու անիրաւութեան նորանոր պատրուակներ, պողալով պոռչտալով իր խոպոտ, ճաթած ձայնովը:

— Ա՛ն չըլթիկը ի՞նչ հախով մեր բարաները մեզի չիտար կոր տէ անոր ասոր պողազը կը նետէ կոր... քատուք ծան չունի՞ք, կը բացադանչէր պահ մը կենալով փողոցին մէջտեղը ու գաղթականներուն նայելով յանդիմանական բուռն ձեւով մը:

Թրուանդ Մրմսթեօխանլիան (Մարտիտի)



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

— Վենետիկի Միսիթարեան վանքը լոյս ընծայած է իր այն հրատարակութիւնը, որուն հասոյթը հայ որբերուն պիտի յատկացուի:

Ամէն հայ, որ կուզէ իր լուման տալ հայ որբերուն, ասկէց աւելի գեղեցիկ ու աւելի հաճելի առիթ մը չէ կարող գտնել:

— Վիեննայի Միսիթարեանց սպարանէն լոյս տեսած «Չէթունի անցեալէն ու ներկայէն» գրքին հեղինակը, Չէյթունցին, նամակ մը գրելով խմբագրութեանս, կըսէ. «Ներկասիրութեանս վերաբերմամբ ձեր ըրած նկատողութիւններուն համար կը փութամ շնորհակալութիւն յայտնել: Գալով ձեր յօդուածի այն մասին, ուր ցանկութիւն կը ցուցնէք իմանալ Չէյթունցիներու ընտանեկան եւ այլ սովորութիւնները, ներկայիւս կը փութամ յայտնել թէ այդ ամէնը արդէն գրուած պատրաստուած է, ու պիտի հրատարակուի գրքին Բ. հատորին յաւելուածին մէջ: »

— Օրի մէջ Պ. Իւուպէն Կոհիէ կը գրէ. « Բոլոր այն ժողովուրդները զորս Ֆրանսա երբեմն իր պաշտպանութեան տակ պոսած էր՝ չափազանց դժնդակ յուսախաբութիւններէ կանցնին: Անոնք տեսան երեք հարիւր հազար հայերու խողխողումը մեղսակցութեամբ պալատան սպասաւոր թըշուառական Հանթօթին, վասն զի Մարգասպանը քանի մը պատուանշան զրկած էր Ֆէլիքս Ֆոռի կիսերուն: Յետոյ տեսան հանրապետութեան նախագահ Լուպէն որ անյագորէն ընդունեց Ապտիւլ Համիտի պատուանշաններն ու ընծաները: Անոնք կը տեսնան վերջապէս Փրանսական Երեսփ. ժողովոյ նախագահը որ անձամբ կերթայ առնելու անմեղ արեան գինը: »

— Հոկտեմբեր 23 ի Մարտին մէջ անախորժ անակնկալի մը կը հանդիպինք, « զողութիւնները ցուցահանդէսին մէջ » խորագրով լուրի մը մէջ սա տողերը կերեւան. « Շնորհիւ ոստիկաններու արթուն հսկողութեան, ձերբակալուած են հինգ քրակահատներ, որոնց երկուքը կին, մէկը իտալացի, ու երկուքը հայ, Միքայէլ Անտոն, քսան երեք տարու, Կ. Պոլիս ծնած, եւ Նիքոլօֆ Շանի (*), քսան երկու տարեկան. երկուքն ալ Սէն-Մարթէն փողոցը կը բնակին: Շանտը-Մարսի քոմիսէրը կեդրոնական բանտը նետած է զանոնք: » Անուններէն դատելով, մէկը վաւերական հայ մըն է, իսկ միւսը, եթէ Փրանսական թերթը անունը սխալ չէ գրած, յոյն մըն է: Ինչպէս կերեւայ, յոյները հայերէն աւելի բախտաւոր են. իրենց չարագործները իբրեւ հայ կը ներկայացնեն: Կը շնորհաւորենք

Պ. Միքայէլ Անտոնեանը որ այդ հանդիսաւոր կեդրոնին մէջ ամէն ջանքը թափեր է հայուն պատիւը բարձրացնելու համար !!: Պոլիս ամէն ատեն առիթ կունենայինք լսելու հայ չարագործներու անուններ, ու այնքան սովորական եղած էր ասիկա որ յօնքերնիս չէինք պոստեր: Բայց արտասահման, օտար թերթի մը էջերուն մէջ որքան պա՛ղ տպաւորութիւն մը առաջ կը բերէ հայ անունը չարագործի մը անուան փակցուած:

Շնորհիւ խմբագրութիւնը յայտարարութեամբ մը կը ծանուցանէ իր ընթերցողներուն թէ թերթը առժամապէս դադրած է, եւ յունուարէն սկսած պիտի վերատին հրատարակուի Վիէննայի մէջ:



Բ Ա Ն Ա Ս Է Ի

Հանգէս հնախօտական, պատմական և քննական. կը հրատարակուի երեք ամիսն անգամ մը, տարեկան չորս գիրք:

Տնօրէն՝

Կ. Յ. ԲՍՍՄՍ.ՂԵԱՆ


Կ'աշխատակցին ազգային և օտար արեւելագէտներ:

Տարեկան գինն է 20 ֆր.

Отговорникъ Н. Драгулевъ

Издательство «Ориенталъ» — Варна.

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ



Շախոյ իններորդ ամիսը կը թեւակոխէ, ու դեռ բաժանորդներուն մեծագոյն մասը չեն վճարած իրենց պարտքը: Խմբագրութիւնս թերթին առաջին քանի մը թիւերուն մէջ յայտարարած էր թէ անոնք որ առաջին երեք թիւերը ընդունելէ յետոյ ետ չեն դարձներ, բաժանորդ կը նկատուին. հետեւապէս անոնք որ ութը ամիսէ ի վեր Շախոյ կ'ստանան ու կը կարգան պարտաւոր են վճարել տարեկան բաժնեգինը:

Ու է թերթի իրաւունքն է պահանջել կարդացուած թերթին բաժնեգինը, իսկ բարոյականի աէր ու է մարդու տարրական պարտականութիւնն է վճարել իր կարդացած թերթին փոխարժէքը: Ներքոր այս պարտականութիւնը կանստուի, թերթ մը լիութի ազատութիւն կը վայելէ իր ուզած կերպովը վարուելու իր պարտազանց բաժանորդներուն հանդէպ:

Ուստի խմբագրութիւնս կ'սպասէ որ բաժնեգիները անյայտ վճարուին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒԳԵԱՆԻ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գ. ՏԱՐԻ

Նախորդ տարիներու ուղղութեամբը գրուած՝ կը պարունակէ ազգային-պատմութեան վերաբերեալ շատ շահեկան և օգտակար կտորներ, ինչպէս են Գրաբար և Ոսկեղար, Հայոց հին կրօնքը, Առեւտուրը հին հայոց մէջ, Կիլիկիա, Շնորհալի, Հայ պատրիարքներ, Սահմանադրութիւն և այլն. խորագրով գլուխները:

Թուղթը շատ լաւ, ապագրութիւնը մաքուր: Գինն է 1 ֆր. — Բ. ՏԱՐԻին գինը 1 ֆր. — Ա. ՏԱՐԻինը 60 սանթ.:

Դիմել յօրինողին ստ հասցեով՝ J. G. BONDJOUKIAN,
VARNA, (Bulgarie).

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Երկրորդ քաղ, Շիրյենսիա փողոց, (Մագալլը յեշմեի կից)

Կը տպագրուին հայերէն, պուրկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեատման, հարցեատման, հարսանեկան հրատիրագիր, ազդարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազդ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:

Գունաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տառեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ՊԻՆԵՐԸ ՅՈՅԺ ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նոսրեանք եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).